10.56653/18290361-2025.16-139

Էդգար Հովհաննիսյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
hovhannisyanedgar@yahoo.com

ՍԱՌԸ ԶԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ[1]*

Հիմնաբառեր. Ռուբեն Տեր-Մինասյան, սառը զենքեր, հուշեր, ազգային-ազատագրական պայքար

Ներածություն

Սառը զենքերի տեսակները բազմազան են՝ թուր, դաշույն, նիզակ, նետ ու աղեղ, կացին, գուրզ ու գավազան և այլն: Հրազենային զենքի ստեղծումից և լայն տարածումից հետո սառը զենքի մարտական նպատակներով կիրառությունն աստիճանաբար սկսեց նվազել, սակայն այն երբեք վերջնական չկորցրեց իր նշանակությունը՝ շարունակելով մնալ տարբեր ռազմական ստորաբաժանումների զինանոցում: Բացի մարտական նշանակությունից սառը զենքի տարբեր տեսակներ ունեցել են դեկորատիվ-կիրառական նշանակություն: Այն համարվել է նաև որպես պերճանքի առարկա՝ հաճախ պայմանավորելով դրա կրողի սոցիալական կարգավիճակը: Բացի իր կիրառական նշանակությունից սառը զենքը դեռևս հնագույն ժամանակներից ունեցել է նաև կարևոր խորհրդանշական նշանակություն: Սառը զենքի տարբեր տեսակների կրումը շատ ժողովուրդների մոտ հանդիսացել է արիության և տղամարդկության խորհրդանիշ: Այսօր էլ այդ ընկալումները որոշակիորեն պահպանվել են: Տարբեր երկրներում սառը զենքը, հատկապես դրա շեղբավոր տեսակները, հանդիսանում են պաշտոնական, շքերթային զինվորական համազգեստների կարևոր ատրիբուտ:

Եթե հրաձգային զենքը մարդիկ հիմնականում կրել են դրա օգտագործման անհրաժեշտությունից կամ նպատակադրությունից ելնելով, ապա սառը զենքը, հատկապես դրա շեղբավոր տեսակները, կրել են նաև առօրյա կյանքում, առանձին դեպքերում այն հանդիսացել է ավանդական հագուստի՝ տարազի մաս (Կարապետյան 1962, 41, 61, Պետոյան 2016, 405):

Սառը զենքերից ստիպողաբար հրաժարումը կամ կրելու արգելքը հաճախ հանդիսացել է պատժի ձև կամ անարգանքի դրսևորում դրա տիրոջ նկատմամբ:

* Ստացվել է 08.07.2025թ., ուղարկվել է գրախոսության՝ 28.08.2025թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025թ:

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ «25RG-6A056» ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հայաստանում սառը զենքի պատրաստման և կիրառության հիշատակումները գալիս են հնագույն ժամանակներից: Մետաղագործության տարբեր ճյուղերի հետ Հայաստանում մշտապես զարգացման բարձր մակարդակի է հասել զինագործությունն (Աբրահամյան 1956, 66–85; Առաքելյան 1958, 133–187; Есаян 1966; Խնկիկյան 1977, 24–43; Փիլիպոսյան 1999; Димидюк 2019, 33–48; Աղայան 2000, 129–136) իր համապատասխան ճյուղերով ու ենթաճյուղերով (Մառանկոզեան 1891; Բազէեան 2020, 395–396): Զինագործությունը ոչ միայն տարբեր ենթաճյուղեր է ունեցել, այլև դրա զարգացման հետ ուղղակի առնչություն են ունեցել նաև մի շարք այլ հարակից արհեստներ, ինչպես օրինակ դարբնությունը, փականագործությունը, հյուսնությունը, կաշեգործությունը, արծաթագործությունը, ոսկրագործությունը և այլն: Հայ զինագործները կարևոր ավանդ են ունեցել նաև տարածաշրջանի մի շարք երկրներում բնագավառի զարգացման ուղղությամբ (Аствацатурян 1995, 140–159, 166–179):

Պատմական զենքերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտել զինագործական արհեստի առանձնահատկությունները, այլև իր մեջ պարունակում է հսկայական ազգագրական նյութ, որը կարող է լույս սփռել տվյալ ժողովրդի պատմության, կենցաղի, աշխարհընկալումների և մի շարք այլ հարցերի լուսաբանման ուղղությամբ: Ի դեպ հետաքրքիր է, որ հայ զինագործների համքարության հովանավոր սուրբը հանդիսացել է Հայոց եկեղեցու հայտնի կաթողիկոսներից՝ Հովսան Օձնեցին (Егиазаров 1891, 206; Մառանկոզեան, 1891):

19-րդ դարի երկրորդ կեսից, ինչպես արդեն նշվեց, հրազենի տարածման հետ սառը զենքի կիրառման շրջանակը սկսել էր նվազել: Սակայն այն շարունակում էր լայնորեն կիրառվել Հայաստանի տարբեր շրջանների՝ հատկապես լեռնային հատվածների բնակչության կողմից:

Սառը զենքը և դրա օգտագործումը բնորոշ էր հատկապես Արևմտյան Հայաստանի լեռնային հատվածներում պահպանված կիսանկախ կամ որոշ ինքնուրույնության տարրեր պահպանած շրջաններում՝ Սասուն, Շատախ, Զեյթուն և այլն: Ռուբեն Տեր-Մինասյանը Սասունի լեռներում պահպանված նման կարգավիճակ ունեցող հայերին, որոնք իրենց բնույթով ու կենցաղավարությամբ նմանություն ունեին քրդերին, անվանում է «աշիրներ կամ ազատներ», կային նաև «կիսաազատներ»: Լեռներում ծվարած այս հայերը զինված էին իրենց նահապետական զենքերով և իշխանությունները չէին կարողանում արգելք հանդիսանալ դրան (Ռուբէն 1982գ, 30–33): Նմանատիպ իրավիճակ էր նաև Զեյթունում: Ճանապարհորդներից մեկն այսպես է նկարագրել Զեյթունը. «…Անառիկ լեռան մը կողմի վրա շինված մի քաղաք, տուներ տուներուն վրա, մեկուն տանիքը միշտ մյուսին բակն է աստիճանաբար շինված: Տները մեծ մասամբ երկու հարկանի են, վերին հարկում ապրում էին իրենք, իսկ ներքին հարկը շտեմարաններ էին ու ախոռներ…: Տան պատերն ամեն տեսակ հրացաններով, դանակներով ու սրերով զարդարված, ավելի զորանոցի մը երևույթ ունեն, քան թե տան և այս ոչ թե մեկ երկու անձանց մենաշնորհ մ՚ե, այլ ամբողջ հասարակութեան…» (Մելիքսեթյան 1960, 8): Այս մեջբերումը հիանալի նկարագրում է հայկական լեռնային բնակավայրերում զենքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբների ազգային ազատագրական շարժման ընթացքում հայ ֆիդայիների և ապստամբած շրջաններում տեղացի մարտիկների կողմից հիմնականում օգտագրծվել են շեղբավոր սառը զենքի՝ խոցող, հատող, տարբեր տեսակներ՝ հիմնականում թրեր և հատկապես դաշույններ: Տարածված էին նաև մարտական կացիններն ու տապարները: Այդ ժամանակաշրջանում տեղացիների մոտ երբեմն կիրառվում են նաև պաշտպանական նշանակության միջոցներ՝ տեղական ինքնատիպ վահաններ:

Քննարկվող ժամանակաշրջանում յուրաքանչյուր ֆիդայի, որպես իր ռազմական հանդերձանքի մաս, պարտադիր ունեցել է դաշույն: Դաշույնները հիմնականում կիրառվել են մերձամարտի, դիվերսիոն գործողությունների ժամանակ, ինչպես նաև տարբեր ահաբեկումների ընթացքում, երբ հարկ է եղել գործել անաղմուկ:

* * *

Ռուբեն Տեր-Մինասյանի հասարակական-քաղաքական գործունեությունը հանգամանալից լուսաբանվել է հայ պատմագիտության կողմից (Ստեփանյան 2008, 184): Հավուր պատշաճի գնահատական է տրվել նաև վեջինիս թողած ստեղծագործական ժառանգությանը, այդ թվում պատմագիտության տեսանկյունից արժևորվել է Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» հայտնի հուշագրությունը (Հարթմանն 2011, 39–48; Ստեփանյան 2012, 91–102): Հուշագրության ժանրին պատկանող այս աշխատությունը չի սահմանափակվում միայն այդ ժանրին բնորոշ անձնական կյանքի և հեղինակի անցած ճանապարհի նկարագրություններով, այլ այն շատ ավելի բազմաշերտ, խորը և բացառիկ տեղեկություններ է հայտնում 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայության հասարակական-քաղաքական, կրթական, մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքի, կենցաղի, սովորույթների և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Ռուբենին բնորոշ վերլուծական կարողությունները դրսևորվել են նաև այս աշխատության մեջ, որով այն հերթական անգամ շահեկանորեն տարբերվում է ժանրի նմանատիպ այլ աշխատություններից:

Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» բացառիկ հետաքրքրական տեղեկություններ է պարունակում նաև հայերի կողմից սառը զենքի կիրառության, նշանակության, խորհրդանշական դերակատարության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ սառը զենքի մասին պահպանված նման տեղեկություններն աչքի չեն ընկնում իրենց առատությամբ, Ռուբենի հաղորդած տեղեկությունները հանդիսանում են խիստ արժեքավոր և կարող են բացառիկ նշանակություն ունենալ հայկական զինագործության և սառը զենքի վերաբերյալ ուսումնասիրությունների համար:

Ռուբենի հուշերում սառը զենքի մասին հիշատակությունները բազմաթիվ են: Դրանք կարելի է առանձնացնել երկու առանձին խմբերի: Նկարագրությունների մի կարևոր մասը վերաբերում է տեղացի բնակչության կողմից սառը զենքի կիրառմանն ու օգտագործմանը: Քանի որ Ռուբենը Արևմտյան Հայաստանում իր գործունեության ընթացքում երկար տարիներ գործել է Տարոնում, սառը զենքի մասին հաղորդած տեղեկությունները հիմնականում վերաբերում են հենց այդ

տարածաշրջանին, հատկապես Սասունին: Ռուբենի հուշերում տեղ գտած սառը զենքի վերաբերյալ անդրադարձների մյուս խումբը վերաբերում է ազգային-ազատագրական շարժման մասնակիցների, ֆիդայիների կողմից սառը զենքերի կիրառմանն ու դրանց նշանակությանը:

Սառը զենքի վերաբերյալ տեղեկությունները Ռուբենը հիմնականում հաղորդում է որպես ականատես, սակայն հաճախ հանդիպում են տվյալներ, որ վերջինս ներկայացնում է միջնորդավորված ձևով: Նշենք նաև, որ Ռուբենի հուշերում կան նաև բազմաթիվ հիշատակումներ հայերի կողմից հրազենի տարբեր տեսակների կիրառման վերաբերյալ:

Ռուբեն Տեր-Մինասյանի հաղորդած տեղեկությունները Արևմտյան Հայաստանի բնակչության կողմից սառը զենքի օգտագործման վերաբերյալ 19-րդ դարի վերջերին–20-րդ դարի սկզբներին

Արդեն նշվեց, որ Ռուբենի հուշերում արժեքավոր տեղեկություններ կան Արևմտյան Հայաստանում, հատկապես մի շարք լեռնային բնակավայրերում տեղացիների կողմից սառը զենքի տարբեր տեսակների օգտագործման վերաբերյալ:

Մասնավորապես խիստ հետաքրքրական են Ռուբենի հաղորդած տեղեկությունները սասունցիների շրջանում զենքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, փոքր հասակից դրա կիրառմանը վարժեցվելու և օգտագործելու վերաբերյալ: Մշո դաշտի և հատկապես Սասնո գյուղերում երիտասարդները հաճախ իրենց վրա կրում էին դաշույններ՝ «խենչալներ»[2] և պատանի տարիներից սովորում դրանք օգտագործել (Ռուբէն 1982զ, 72–73): Խոսելով հայտնի ու քաջ ֆիդայիներից Գալեյի մասին՝ Ռուբենը գրում է. «…դեռ մանուկ հասակէն սորված էր *խենչալ* կապել և Տերսիմի *շեշխանա*[3] հրացանը գործածել» (Ռուբէն 1982դ, 181): Մեկ այլ տեղ խոսելով Մուշ քաղաքի մոտ գտնվող Փեթար գյուղից հետագայում հայտնի հայդուկ Իսրոյի մասին՝ Ռուբենը նրան նկարագրում է. «…ճոկանը ձեռքին, խենչալը մէջքին» (Ռուբէն 1982զ, 72–73): Ճոկանը դա ձեռնափայտն էր կամ գավազանը, որը լեռներ բարձրանալու ժամանակ օգտագործվում էր որպես, այսպես ասած, երրորդ ոտք, թեքությունները հեշտ հաղթահարելու համար, սակայն ճոկանները անհրաժեշտության դեպքում հանդես էին գալիս որպես սառը զենք: Փայտե երկար ձեռնափայտերի մի հատվածը գնդաձև էր, հաճախ պատված մեխերով: Ճոկանի ծանր մասով հարվածները կարող էին դիմացինին լուրջ վնաս հասցնել:

---

[2] Խենչալ, խանչալ բառը հայերենում փոխառություն է պարսկերեն խենջար (خنجر) բառից, որը նշանակում է դաշույն (Յարութիւնեանց 1912, 148): Շնորհակալություն ենք հայտնում իրանագետ, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանին խենչալ բառի ստուգաբանության հարցում խորհրդատվության համար:

Հետաքրքիր է, որ զենքերի շատ անվանումներ, այդ թվում խանչալ անվանումը, նույն էր նաև Հայաստանի շատ այլ տարածաշրջաններում (Հուլունեան, Հաճեան, 1964, 315):

[3] Շեշխան նշանակում է վեցանկյունանի: Այս հրացանի անվանումն առաջացել է պարսկերեն շեշ՝ վեց բառից: Այդ հրացանները այդպես են կոչվել քանի որ դրանց փողի բերանները վեց անկյունանի էին և լիցքավորվում էին փողի բերանից: Շեշխանա հրացանները լայնորեն տարածված էին սասունցիների, ինչպես նաև քրդերի շրջանում (Շուտ 1905, 148):

Ռուբենն իր հուշերի տարբեր հատվածներում հիշատակում է ժողովրդի կողմից կիրառվող բազմաթիվ զինատեսակներ, սկսած ինքնաշեն հրացաններից մինչև տարբեր երկներում արտադրված գործարանային հրացաններ, այնպես էլ սառը զենքեր՝ թրեր, դաշույններ, ինչպես նաև հնագույն ժամանակներից օգտագործվող զենքի այլ միջոցներ: Այսպես, հայկական գյուղերից մեկում քրդերի դեմ ինքնապաշտպանության ժամանակ կիրառվում են «հին դարերու զէնքեր… պարսէտներ» (Ռուբէն 1982բ, 101): Խոսքը քարեր նետող պարսատիկների մասին է, որը հնագույն ժամանակներից լայնորեն կիրառվել է Արևելքում: Նկարագրելով Շատախ գավառում տեղի ունեցած կռիվներից մեկը՝ Ռուբենը նշում է, որ գյուղացիները զինված էին ով ինչով կարող էր. «չախմախլի[4], որսի հրացան, տապար, սակր[5], կացին, դանակ և թուր» (Ռուբէն 1982բ, 102):

19-րդ դարի վերջերից, հատկապես Սասունի 1893–1894 թթ. ապստամբությունից հետո աստիճանաբար ազգային կուսակցությունների ջանքերով Սասունում և հարակից շրջաններում սկսեցին տարածվել ավելի կատարելագործված ժամանակակից զինատեսակներ, մասնավորապես հրացաններ, որոնք գալու էին փոխարինելու չախմախլի հարացաններին և «թուր ու մառթալ»-ին (թուր և վահան), որոնց Ռուբենի գնահատականով «…զենք անունը տալն իսկ յանցանք էր» (Ռուբէն 1982ա, 116–117): Ժամանակը իր պահանջներն էր դնում և, բնականաբար, արդյունավետ պայքարի համար կարևոր էր ժամանակակից զենքեր ունենալը: Սակայն լեռնականների սառը զենքը դեռ երկար ժամանակ կմնա վերջիններիս զինանոցում:

Ռուբենը վկայում է, որ Տարոնում տարածված էր նաև «թուր ու մառթալ» անունով «գեղեցիկ» պարը կամ խաղը (Ռուբէն 1982դ, 151): Ցավոք, այդ պարի նկարագրությունը տրված չէ Ռուբենի հուշերում: Վարդան Պետոյանի «Սասուն» արժեքավոր աշխատությունում տրված է «Թուր ու մառթալի» նկարագրությունը: Խաղին, որը հավանաբար նաև պարային շարժումներով է ուղեկցվել, մասնակցում էին երկու հոգի՝ զինված թրերով և կես մետր տրամագիծ ունեցող վահաններով: Հաղթում էր նա, ով կարողանում էր հակառակորդի մարմնին թրով հարված հասցնել: Խաղը նվիրված է եղել սուրբ Մարութա սարին և Անդոկին, ուստի. «Թուր ու մառտալ խաղը միայն ռազմիկ հերոսների գործն էր, դրա համար էլ միայն Մարութա սարի և Անդոկի ուխտագնացությունների ժամանակ քաջի անուն վաստակած, կռիվներում ու սրամարտերում կռված մարդիկ էին խաղում», — գրում է այդ

[4] Չախմախլի կամ չաքմաքլի, հրացանի տեսակ է, որը մեծ տարածում ուներ լեռնական հայերի, ինչպես նաև քրդերի շրջանում: Չաքմաքլի նշանակում է հրահանավոր, այսինքն հրահանի կայծքարի միջոցով էր տեղի ունենում վառոդի բռնկումը և շեշխանա հրացանների նման լիցքավորվում էր փողի բերանից, սակայն դրանց համեմատ փողն ուներ կլոր կառուցվածք և ավելի կարճ էր, (Շուտ 1905, 148–149): Սասունում և Հայաստանի տարբեր շրջաններում հրացանները հաճախ անվանվում էին «թվընգ», «թվանք»: Սասունցիների օգտագործած հրազենի տարբեր տեսակների մասին տես (Կարապետյան 1962, 40–43):

[5] Սասունում և հարակից լեռնային շրջաններում տարածված են եղել միասայր մահիկաձև կացնանման սակրերը, որոնք ունեցել են մինչև 1.5–2 մետր փայտե կոթեր: Դրանք հարգի են եղել թե՛ հայերի և թե՛ քրդերի շրջանում և հայտնի էին նաչախ, նաճախ, նաճագ կամ բալթա անուններով, (Պետոյան 2016, 345, 363; Շուտ 1905, 152–153):

խաղի մասին Վարդան Պետոյանը (Պետոյան 2016, 548): «Թուր ու մառթալը», ինչպես նաև Յարխուշտան և այլ ռազմապարեր պարում էին նաև հայ ֆիդայիները (Ռուբէն 1982ե, 53): Սասունցիների մոտ տարածված են եղել նաև այլ ռազմախաղեր, որը խաղում էին թե՛ պատանիները և թե՛ մեծահասակները (Պետոյան 2016, 541–556):

Ռուբենի վկայությունների համաձայն 19-րդ դարի վերջին սառը զենքը սասունցիների մոտ ուներ ոչ միայն խորհրդանշական կամ դեկորատիվ նշանակություն, այլ այն ակտիվորեն շարունակում էր օգտագործվել ռազմական նպատակներով: Վերջինս, անդրադառնալով 1893–1894 թթ. Սասունի հայտնի ամպստամբությանը, բազմիցս նկարագրում է սասունցիների կողմից «թուր ու խենչալով» թշնամու հետ մերձամարտի մեջ մտնելու և հաղթության հասնելու տեսարաններ: «…Գէալեցիք անոնց ետևէն թուր ու խենչալով դուրս կը քշեն քարերու մէջէն յորդող թշնամին…», «Տալորիկցիք նորէն սիրտ կ՛առնեն, յետ կը դառնան և վիրաւորուած գազաններու նման թրերով ու խենչալներով կ՛իյնան հազարաւոր քիրտերու վրա» (Ռուբէն 1982գ, 99), — այսպես է Ռուբենը նկարագրում սասունցիների կողմից սառը զենքի կիրառության դրվագները ապստամբության ժամանակ: Մերձամարտի հերթական դրվագում Ռուբենը ներկայացնում է Սասունի հերոսներից Գեալու Պետոյի հերոսական մահը 1894 թ. օգոստոսի 3-ի թուրքերի լայնածավալ հարձակման ժամանակ տեղի ունեցած հերթական «խենչալով ու թուրով» կատաղի կռվի ընթացքում. «Այստեղ կը սպանուի և Գեալու Պետոն՝ Սասունի իշխանը, արիւնով ողողուած իր թուրը ձեռքին» (Ռուբէն 1982գ, 110):

Ռուբենը 1906 թ. սկսած Տարոնում գտնվելու ժամանակ արդեն որպես ականատես բազմիցս անդրադառնում է հայերի զինվածության հարցերին ու զենքերին: Այդ կապակցությամբ նա գրում է. «Բարձրաւանդակի[6] շրջանին մէջ, ինչպէս քիւրտերը նոյնպէս ալ հայերը զինուած էին իրենց նահապետական չախմախլի հրացաններով, իրենց թուր ու վահանով, իրենց անբաժան կեռ խենչալով» (Ռուբէն 1982գ, 34):

Ռուբենի հիշատակած կեռ խենչալները երկսայրի էին, իրենց որոշակի կորության հաշվին ունեին թե՛ կտրելու և թե՛ ծակելու հնարավորություն: Բռնակները

---

6 «Բարձրավանդակը» ՀՅԴ Սասունի կազմակերպության անվանումն էր: Ռուբենն իր հուշերում պարզաբանում է, թե որ շրջաններն էին մտնում «Բարձրավանդակի» մեջ. «Տաւրոսեան լեռնաշղթայէն հարաւ ինկած բոլոր գաւառները կը մտնէն բացառապէս Բարձրաւանդակի շրջանին մէջ: Այդ գաւառներն էին.
1. Շատխու (Մշոյ գայմագամութեան մաս),
2. Գեալու (Մշոյ գայմագամութեան մաս),
3. Տալորիկի (Կինճի միութեսարըֆութեան մաս),
4. Իշխանաձորի կամ Խիանքի (Կինճի միութեսարըֆութեան մաս),
5. Ահարոնքի կամ Խուլբի (Կինճի միութեսարըֆութեան մաս),
6. Բռնաշէնի կամ Սբ. Աղբերկայ (Հազոյի և Պիթլիսի գայմագամութեան մաս),
7. Խութի (Պիթլիսի գայմագամութիւն),
8. Մարաթուկի կամ Բալակցոց (Մուշի միութեսարըֆութեան Հազոյի գայմագամութեան մաս),
9. Բիրմի (Կինճի գայմագամութիւն),
10. Փսանքի (Մշոյ գայմագամութեան Հազոյի մասէն),
11. Հազոյի (Հազոյի գայմագամութեիւն)»: (Ռուբէն 1982գ, 8):

հիմնականում պատրաստված էին լինում կենդանիների եղջյուրներից, ոսկորներից, առանձին դեպքերում փղոսկրից, ունեին նաև կաշվե պատյաններ: Այս տիպի դաշույնները լայնորեն տարածված էին նաև քրդերի մոտ (Малоземова 2015, 393–394): Փաստորեն Տավրոսի լեռնային շրջանների հայերի և քրդերի զենքերը ունեին շատ նմանություններ և ընդհանրություններ: Առհասարակ այս երկու ժողովուրդները, հատկապես Սասունի շրջանում, ապրելով կողք կողքի, փոխազդեցությունների արդյունքում միմյանցից վերցրել, ընդօրինակել էին շատ սովորույթներ, կենցաղավարության ձևեր (Պետոյան 2016, 260–268): Ամերիկացի բողոքական միսիոներ Մոուզես Փերմըլլին 1870-ական թթ. սկզբներին Բիթլիս այցի ժամանակ նշում է, որ տարածաշրջանի քրիստոնյաները հագնվում էին քրդերի պես, կրում նույն զենքերը և անգամ խոսում քրդերեն: Թեև տեղի հայերը հաճախ ճնշումների էին ենթարկվում քրդերի կողմից, սակայն, վերջինիս վկայությամբ հիմնականում հաջողվել էր երկու ժողովուրդներին ապրել կողք-կողքի խաղաղ պայմաններում (Parmelee 1888, 59):

Կեռ դաշույնների զանազան տարատեսակներ տարածված էին նաև տարածաշրջանի այլ ժողովուրդների՝ պարսիկներ, արաբներ և այլն, մոտ:

Այդ դաշույնները հիմնականում պատրաստվում էին նույն զինագործների կողմից, որոնք հիմնականում հայեր էին: «Հայ զինագործը քրդու երկրորդական Ալլահն է, որի գլխով երդում կանէ» (Շուտ 1905, 175), — վկայում է քրդերի ազգագրությունը ուսումնասիրած Շվոտը (Հմայակ Արամյանց): Սասունի զինագործները հիմնականում գործել են Հազզո-Խաբլջոզում, Տալվորիկում և Փասորում: Պատրաստվել են դաշույններ, թրեր, մարտական կացիններ, վահաններ և այլն: Հայ զինագործների արտադրանքը չի զիջել իրենց որակով Տիգրանակերտի, Դիարբեքիրի, Մարդինի, Հալեպի հայտնի զինագործների պատրաստած սառը զենքերին (Կարապետյան 1962, 39, Պետոյան 2016, 363):

Փաստորեն, Սասունի, Շատախի և դրանց հարակից լեռնային շրջաններում հայերը հրազենից բացի շարունակում էին կրել սառը զենքեր, որը խոսում է նաև վերջիններիս կիսանկախ կարգավիճակի մասին, երևույթ, որը բնորոշ չէր շատ այլ հայկական բնակավայրերում: Այդ կապակցությամբ Ռուբենը գրում է. «Հարկաւ տարբեր էր դրութիւնը ուրիշ շրջաններու մէջ, ուր կառավարութիւնը ուժեղ էր և ուր թուրք ղաբիլաթները ոտք կը կոխէին: Այնտեղ հայը իրաւունք չունէր զէնք կրելու, նոյնիսկ ունենալու: Ատոր համար ո՛չ թէ հասարակ տուգանք մը կար, այլ 101 տարուան բանտարկութիւն և այդ ալ այն ժամանակ, երբ մնացեալ բոլոր ազգերը նոյն շրջաններու մէջ ազատ իրաւունք ունէին զէնք կրելու և պահելու» (Ռուբէն 1982գ, 34):

Ռուբենի վկայությամբ, 1894 թ. Սասունի ապստամբության ժամանակ Սասունը պաշարած Բիթլիսի վալի Թահսին փաշան, երբ սասունցիներին ներկայացրած մի շարք պահանջների շարքում, առաջարկում է նրանց հանձնել զենքերը, սասունցիները պատասխանում են, որ իրենք զենքերը չեն կարող հանձնել, քանի որ «… իրենք հին ժամանակներէ ի վեր աշիրներ են և բոլոր աշիրէթներու համար, նոյնպէս իրենց համար ալ զենքը նուիրական է և անկէ չեն կրնար բաժանուիլ. մանաւանդ որ իրենք ստիպուած են կռիւ մղել շրջապատող քիւրտ աշիրէթներու դէմ,

որոնք շարունակ յարձակումներ կը գործեն իրենց վրայ: Եթէ բոլոր աշիրէթները զինաթափ ըլլան, իրենք ալ կը յանձնեն իրենց զենքերը» (Ռուբէն 1982գ, 95):

Մեջբերումից հստակ երևում է, որ սասունցիների համար զենքը, բացի պաշտպանական գործառույթը, ունեցել է ավանդաբար ձևավորված «նվիրական» նշանակություն, այն հանդիսացել է վերջիններիս կիսանկախ կարգավիճակի խորհրդանիշը՝ ուղղակի և անուղղակի իմաստով:

Սառը զենքի կիրառությունը սասունցիների կողմից շարունակվում էր նաև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին: Ռուբենի վկայությունների համաձայն հայոց ցեղասպանության շրջանում Սասունում ծավալված կռիվների ժամանակ սասունցիները հաճախ դաշույններով թուրքական խրամատների վրա հարձակումներ էին կատարում (Ռուբէն 1982գ, 80): Սառը զենքը հաճախ կիրառվում էր դիվերսիոն հարձակումների ժամանակ: Այսպես 1915 թ. Սասունը շրջապատված էր թուրքական զորքերով, որոնք իրենց հետ ունեին նաև թնդանոթներ: Քանի որ թնդանոթները մեծ վնաս էին հասցնում սասունցիներին, որոշվում է գիշերային հարձակումով ոչնչացնել դրանք: Ռուբենի խոսքերով գործողության ժամանակ. «առաւելապէս դաշոյնն ու սուինն» (Ռուբէն 1982է, 65) պետք է գործադրվեին: Գործողությունը հաջողությամբ ավարտվում է և թնդանոթները շարքից հանվում են սասունցիների կողմից:

1915 թ. Սասունի կռիվների ժամանակ մեկ անգամ չէ, որ սասունցիները հարկադրված թուրքերի և քրդերի հետ կռվի էին նետվում սվինամարտի ու դաշույնամարտի, երբ հրաձգություններով հնարավոր չէր լինում առաջադրված խնդիրը լուծել: Նման մերձամարտերը լինում էին ավելի դաժան և երբեմն ավելի կորստաբեր (Ռուբէն 1982է, 79): Իհարկե միայն սառը զենքով հնարավոր չէր արդյունավետ դիմադրություն ցուցաբերել:

Ցավոք սրտի, Ռուբենն իր հուշերում չի հաղորդում տեղեկություններ սառը զենքերի պատրաստման վայրերի, եղանակների, զինագործ վարպետների մասին:

Այսպիսով, Ռուբենի հուշերում տեղ գտած տեղեկությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններում հայերի կողմից սառը զենքի օգտագործման, դրա տեսակների և նշանակության մասին:

Ռուբենի հաղորդած տեղեկությունները ֆիդայիների կողմից սառը զենքի օգտագործման վերաբերյալ

Ռուբենի հուշերում սառը զենքի մասին վկայությունների երկրորդ մեծ բաժինը վերաբերում է ֆիդայիների կողմից դրա կրմանը և օգտագործմանը: Նախ հայտնի է, որ ազգային-ազատագրական շարժման ակունքներում կանգնած հայկական ազգային կուսակցությունների՝ ՀՅԴ, ՍԴՀԿ, զինանշաններին տեղ է գտել դաշույնի պատկերներ՝ որպես պայքարի խորհրդանիշ: Ռուբենի վկայությամբ նորընծա դաշնակցականները նաև «խաչի և սուրի վրայ կ՚երդնուն» (Ռուբէն 1982գ, 200): Եվ միայն հետագա տարիներին է, որ դաշնակցականների երդման արարողակարգում հրազենը փոխարինում է սառը զենքին:

Ռուբենը իր հուշերում մանրամասն նկարագրում է հայ ֆիդայիների հագուստը, զենքերն ու կենցաղավարությունը (Ռուբէն 1982բ, 283–291)։ Անդրադառնալով զենքերին՝ նշում է. «Մեջքերնին կապած են Հալեպի, Լահորի կամ Տիարպեքիրի գօտին, որուն վրայ չորս կապ կաշիէ պատրոնակալ 240 փամփուշտ մոսինի[7]։ Կողքերնուն՝ տասնոց մաուզէր[8], դարձեալ մէջքերնուն 140[9] փամփուշտները տասնհարուածեանին։ Իսկ այդ բոլորին վրայ ամուր մը կը քաշէ գօտին, խենչալի գօտին, որուն կապուած է կեռ խենչալը Մնըրի կամ Դամասկոսի[10]։ …Երբեմն մէջքին, բայց աւելի յաճախ ձեռքին բռնած է մոսին հրացան»։ Շարունակելով ֆիդայիների զենքերի թեման՝ վերջինս գրում է. «Ան թուրը չի սիրեր, բայց ատոր փոխարեն, մանաւանդ լեռնականները ճոկան կը պտտցնեն և իբրև երրորդ ոտք կը գործածեն ժայռոտ լեռներուն վրայ» (Ռուբէն 1982բ, 283–284)։

Ի տարբերություն թրի, որն իր երկարության պատճառով կարող էր խանգարել ֆիդայիների ազատ գործողություններին և ըստ էության դրա գործնական կիրառումը խիստ սահմանափակվել էր կամ գրեթե դադարել, դաշույնները շարունակում էին ակտիվ գործածվել ֆիդայիների և տեղացիների զինանոցում։ Դաշույնները տարբեր էին։ Եթե տեղացի ֆիդայիներն իրենց մոտ ունեին կեռ խենչալները (Ռուբէն 1982ե, 50), ապա Կովկասից եկած ֆիդայիներն ավելի շատ կրում էին կովկասյան տիպի դաշույններ։ Ուսումնասիրելով ֆիդայիների պահպանված բազմաթիվ լուսանկարները՝ իսկապես ակնհայտ է, որ Կովկասից ժամանած ֆիդայիները իրենց հանդերձանքի հետ գրեթե միշտ կրում էին կովկասյան տիպի դաշույններ։ Ցավոք, Ռուբենի հուշերում չկան տեղեկություններ թե որտեղից էին հայ ֆիդայիները ձեռք բերում իրենց դաշույնները, ովքեր էին դրանք պատրաստում։

Տեղացի ֆիդայիների դաշույնները հիմնականում «կեռ» կամ «ճերմակ» բնորոշվող դաշույններն էին։ Այստեղ խոսքը հավանաբար գնում է ոսկորից պատրաստված բռնակներով կեռ դաշույնների մասին, որոնք լայնորեն տարածված էին տարածաշրջանում։ Այդ դաշույնների բռնակները հաճախ փղոսկրյա էին։ Այդ մասին ակնարկում է նաև Ռուբենը (Ռուբէն 1982դ, 334)։

Ռուբենի մի անդրադարձից պարզ է դառնում, որ ինքը ևս Տարոնում գտնվելու ժամանակ կրում էր սառը զենք։ Նկարագրելով իր հետ կապված մի դրվագ՝

---

7 Խոսքը 1891 թ. արտադրված ռուսական հայտնի Մոսին հրացանների մասին է, որը լայնորեն տարածված էր ֆիդայիների շրջանում։

8 Խոսքը գերմանական Մաուզեր C96 ատրճանակների մասին է, որը նախագծվել է 1896 թ. և տարբեր մոդիֆիկացիաներով արտադրվել մինչև 1939 թ.։ Մաուզերի տարածված մոդելներից մեկը լիցքավորվում էր 10 փամփուշտով, որի պատճառով էլ այն հաճախ ֆիդայիների կողմից անվանվում էր «տասնոց»։ Այդ ատրճանակն իր որակական հատկանիշների շնորհիվ բավականին հարգի էր ֆիդայիների շրջանում։

9 Հաջորդ էջում Ռուբենը ֆիդայիների մոտ եղած ընդհանուր փամփուշտների թիվը նշում է 280, հավանաբար տեքստի այս հատվածում 140-ի փոխարեն պետք է նշված լիներ 40 փամփուշտ, (Ռուբէն 1982բ, 284)։

10 Մեր կարծիքով Ռուբենը Մնըր կամ Դամասկոս ասելով նկատի ունի ոչ թե դաշույնների պատրաստման վայրը, այլ դրանց շեղբերի նյութը, որը ավելի հաճախ պատրաստվում էր դամասկոսյան անունով հայտնի պողպատից։ Դամասկոսյան պողպատը պատրաստվում էր հատուկ եղանակով և աչքի էր ընկնում էր ամրությամբ և դիմացկունությամբ։

վերջինս գրում է. «Կամացուկ մը տասնոցը կը մերկացնեմ և ձեռքս *թուրիկիս* վրայ կը պահեմ» (Ռուբէն 1982բ, 253): Հետաքրքիր է, որ այստեղ այն անվանված է, ոչ թե «խենչալ», այլ՝ «թուրիկ», որը հավանաբար տարբերվել է տեղացիների մոտ տարածված դաշույններից:

Մեջ բերենք Ռուբենի արժեքավոր մի քանի այլ հիշատակությունները ֆիդայիների և «կեռ» ու «ճերմակ» դաշույնների՝ խենչալների մասին: Այսպես, վերջինս, նկարագրելով հայտնի ֆիդայի Փեթարի Մանուկին, գրում է. «…հագած էր ֆետայիի նախշուն շորեր, վեց կարգ փամփշտակալներով, հրացանը վզին, *ճերմակ խենչալը* կողքին…» (Ռուբէն 1982ե, 14): Ռուբենը, երբ անդրադառնում է 1906 թ. օգոստոսին Դուրան-Բարձրավանդակի ՀՅԴ շրջանային ժողովը Ս. Կարապետի անտառի մեջ՝ «Շէյիտներ» (Նահատակներ) կոչվող վայրում, նկարագրում է ժողովի մասնակիցների հանդերձանքը. «Բոլորի մէջքին կամ վիզերէն խաչաձև կախուած են փամփուշտակալներ, իսկ ձեռքերնին կամ ուսերին զանազան հրացաններ-չախմախլու, մարթին[11], մոսին, զէնքերու տեսակներու կատարեալ հավաքածոյ մը. բոլորի *խենչալները միատեսակ* են սակայն, կեռ խանչալ սառն տեսքով» (Ռուբէն 1982դ, 16–17): Այս ժողովի գրեթե բոլոր մասնակիցները տեղացիներ էին և եթե վերջիններիս հրացանները խիստ խայտաբղետ էին ու տարբեր երկրների արտադրության, այսինքն յուրաքանչյուրը կրում էր այն ինչ հնարավոր էր եղել ձեռք բերել, ապա դաշույնները միատեսակ էին: Կարելի է վստահ ենթադրել, որ դաշույնները տեղական ծագում ունեին, պատրաստվել էին տեղի զինագործների կողմից և այդ պատճառով բոլորը միատեսակ էին:

Պատահական չէ, որ դաշույնները, թերևս հայտնի տասնոց ատրճանակների հետ միասին, դարձել էին ֆիդայիներին բնութագրող հատկանիշներ: Անգամ ֆիդայիներին նմանակել ցանկացողները նախ և առաջ փորձում էին իրենց վրա ունենալ դաշույն ու տասնոց ատրճանակ: Այդ կապակցությամբ Ռուբենը պատմում է, որ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո սկսել էին կեղծ ֆիդայիներ ի հայտ գալ: Վերջիններս իրենց համար ֆիդայու հագուստ էին պատվիրում և զինվում նրանց նման և որպես գլխավոր բնորոշիչ ձգտում էին անպայման կրել. «նորաձևութիւն դաձան ճերմակ բուն խենչալը և տասնոց ատրճանակը» (Ռուբէն 1982ե, 33):

Ռուբենի հուշերում կան նաև բազմաթիվ դրվագներ ֆիդայիների կողմից կռիվների ժամանակ դաշույնի կիրառման վերաբերյալ: Ֆիդայիների մոտ ընդունված էր, երբ կռվի ժամանակ ավարտվում էին հրացանի փամփուշտները և անհրաժեշտություն էր առաջանում մինչև վերջ կռիվ մղելու, գործի էին դնում դաշույնները: Նման դեպքերում, որպես կանոն, որպեսզի իրենց զենքը չանցնի թշնամու ձեռքը, ֆիդայիները այն հարվածելով քարերին՝ կոտրում էին, այնուհետև անցնում հարձակման դաշույններով: Այդպիսի դեպքերի՝ «խենչալի և սուինի կռուի», բազմաթիվ նկարագրություններ հանդիպում ենք Ռուբենի հուշերում, օրինակ 1905 թ. Շեյխ Յուսուֆի, Արգավանքի, Առվարինջի կռիվները (Ռուբէն 1982գ, 306, 347, 350) և այլն: Այդ իմաստով բնութագրական է Առվարինջի կռվի նկարագ-

[11] Խոսքը գերմանական արտադրության Հենրի-Մարթին հրացանների մասին է:

ության հետևյալ տողերը. «…այնքան իրարու խառնուած էին զօրքերն ու ֆետայիները, որ միայն խենչալով, ատրճանակով և ատամներով կը կռուէին ֆետայիները» (Ռուբէն 1982գ, 350)։ Իսկ նկարագրելով հայտնի քաջ ֆիդայի Սպաղանցի Մակարին՝ Ռուբենը գրում է. «Եւ իրաւ, մեծ ու արիւնոտ աչքերով, խոշոր գլխով և հսկայ մարմնով այդ աժդահա մարդը կռուի ժամանակ ո՛չ աջ կը նայեր ո՛չ ձախ, խենչալը ձեռին առաջ կերթար…» (Ռուբէն 1982գ, 205)։

Այսպիսով, տեսնում ենք, որ հրազենի լայն տարածումը որոշակի նվազեցրել, բայց ամբողջությամբ դուրս չէր մղել սառը զենքի կիրառումը, որն առանձին դեպքերում նաև ուներ որոշ առավելություններ հրազենի նկատմամբ և լայնորեն կիրառվում էր հայ ֆիդայիների կողմից։

Խիստ կարևոր էր նաև այն, որ ֆիդայիները կռվի ժամանակ ուշադիր լինեին և անփույթ չգտնվեին իրենց իրերի, հատկապես զենքերի նկատմամբ և չկորցնեն, չվնասեն դրանք։ Ռուբենը պատմում, երբ 1898 թ. սեպտեմբերի Խաթվինի և Ավերակ ջրաղացի կռվից հետո Ճարտարի[12] խմբի կենդանի մնացած ֆիդայիները հավաքվում են Ախլաթում։ Աղբյուր Սերոբը քննություն է կազմակերպում հասկանալու կռվի մանրամասները, ինչպես նաև պարզելու թե արդյոք ֆիդայիները չեն կորցրել իրենց իրերն ու զենքերը։ «Ով կորսունցուցած չէ իր չարուխը, իր քոլոզի փուշին, իր փամփշտակալը, հրացանը, խենչալը և առհասարակ իր վրայ գտնուած որևէ բան, ան Սերոբի աչքին արժանաւոր և պաղարիւն զինուոր է…» (Ռուբէն 1982գ, 169), — գրում է Ռուբենը։ Իսկ երբ պարզվում է, որ Ախլաթցի Բաղդասարը կորցրել էր. «իր քոլոզը, իր փամփշտակալը և խենչալը», Սերոբը ցանկանում է նրան տեղում գնդակահարել և միայն զինակիցների ջանքերի և վկայությունների շնորհիվ, որ Բաղդասարը քաջաբար կռվել է, դա տեղի չի ունենում։ Սակայն Բաղդասարը, Ռուբենի խոսքերով, Սերոբի աչքին այլևս «կենդանի մեռել մըն» էր և Սերոբը նրան արտաքսում է երկրից որպես «անարժան ֆիտայի մը» (Ռուբէն 1982գ, 169)։ Ահա նման խիստ վերաբերմունք էր սահմանված ֆիդայիների շրջանում զենքը կորցնողների հանդեպ։

Զենքը, հատկապես սառը զենքն ունեցել է նաև կարևոր խորհրդանշական նշանակություն, այն զուգորդվել է արիության, քաջության հետ, դրա կրելը համարվել է պատվաբեր և ընդհակառակը խիստ ամոթալի ու անպատվաբեր է համարվել զենք կրելու արգելքը։ Իսկ ֆիդայիներին այս կամ այն պատճառով զինաթափելը հանդիսանում էր նաև պատժի ձև։ Ռուբենը հիշատակում է նաև նման դեպքեր։ Օրինակ 1906 թ. ամռանը Ղըզըլաղաճի ֆիդայիների ժողովում կայացվում են մի շարք որոշումներ, այդ թվում, եթե ֆիդայիները իրենց հյուրընկալող տան վրա բռնանան և իրենց համար հատուկ կերակուր պահանջեն, քան այն ինչ ունի գյուղացին, ենթակա են պատժի «…գնդակահարութեամբ, աքսորով և կամ զինաթափութեամբ» (Ռուբէն 1982դ, 8–9)։ Ֆիդայու համար զինաթափությունը համարվում էր դաժան պատիժ, «…սա ամենաբարձր ու դաժան պատիժն է, աւելի ծանր քան մահը» (Ռուբէն 1982բ, 301), — գրում է Ռուբենը զինաթափման վերաբերյալ։

---

12 Ճարտարը հայտնի ֆիդայապետ Աղբյուր Սերոբի հորեղբոր տղան էր։

Դաշույն կրելու արգելքը ևս հաճախ օգտագործվել է որպես կարգազանց ֆիդայիների նկատմամբ պատժի ձև: Ռուբենը բավականին գեղարվեստորեն և տպավորիչ է նկարագրում Գևորգ Չաուշի և Սպաղանցի Մակարի ու վերջինիս մի քանի ընկերների միջև ծագած հակասությունները, որի արդյունքում որոշվում է զինաթափ անել Մակարին և ընկերներին: Բայց հրացանից առավել ծանր էր լեռնեցի հերոսից դաշույնը խլելը: Գևորգի առաջարկով, որպեսզի լարվածությունը չմեծանա և հաշտություն կայանա, որոշվում է ֆիդայիների զենքերը վերադարձնել, սակայն միաժամանակ որոշվում է, որ. «…Մակարը երկու օր առանց խանչալի անցընէ, միւսները երկու շաբաթ» (Ռուբէն 1982բ, 301–302):

Պատվաբեր էր համարվում նաև թշնամուց որպես ավար վերցրած զենքը: Օրինակ, երբ Աղբյուր Սերոբին գլխատող Բշարե Խալիլին սպանելուց հետո հայտնի ֆիդայի սպաղանցի Մակարը խլում է Խալիլի դաշույնը և կախում է իր վրա (Ռուբէն 1982գ, 218):

Որպես բարձր հարգանքի նշան՝ տարածված էր միմյանց զենք ու դաշույն նվիրելը: Ռուբենը Տարոնում գտնվելու ժամանակ, երբ այցի է գնում հայերի նկատմամբ ոչ թշնամական տրամադրված քուրդ ցեղապետ Ղասիմ բեկին, վերջինիս նվիրում է «կազակ[13] հրացան մը» (Ռուբէն 1982դ, 235): Վերջինս մեկ այլ քուրդ ցեղապետի՝ Իբրահիմ փաշային, որը որոշակի համակրում էր հակաթուրքական հեղափոխական շարժումը, նվիրում է «տասնոց ատրճանակ մը, արծաթէ կոթով» (Ռուբէն 1982դ, 232):

Հայտնի է, որ Ռուբենի հուշերում կարելի է հանդիպել նաև ժողովրդական բանահյուսության, առածների ու ասացվածքների բազմաթիվ անգին նմուշների: Դրանց մի մասն էլ վերաբերում են զենքին ու պայքարին: Ահավասիկ այս մեկը՝ «զօռը և սուրը սարեր կը քանդեն» (Ռուբէն 1982դ, 278), որը զենքով պայքարի ժողովրդական պատկերացումների խտացված արտահայտություն է: Իսկ մեկ այլ տեղ քննադատելով ազատության համար միայն խոսքով պայքարողներին՝ գրում է. «Անոնք չեն գիտեր, թէ արդարութիւնը և ազատութիւնը խանչալի ծայրով կը պոկուին», իսկ մեկ այլ տեղ էլ նշում է. «…Կենքի մէջ արդարութիւնը խանչալի ծայրն է: Ով որ յաղթէ, նա է արդար» (Ռուբէն 1982ա, 121, 258):

Ռուբենի հուշերում տեղ են գտել նաև բազմաթիվ հիշատակություններ Արևմտյան Հայաստանի տեղաբնիկ հայերի և ֆիդայիների կողմից հրացանների և ատրճանակների տարբեր տեսակների օգտագործման մասին: Դրանց մի մասը ժամանակի հայտնի ռուսական կամ եվրոպական արտադրության գործարանային հրացաններ և ատրճանակներ էին, իսկ որոշները տեղական կամ հարևան երկրներում պատրաստված հնատիպ հրացաններ (Ռուբէն 1982դ, 262, 265, 334; 1982ե, 155, 156, 158; 1982զ, 125, 283 և այլն): Ռուբենը իր հուշերում բազմիցս անդրադառնում է նաև դեպի Էրգիր զինատար խմբերի անցումներին, զենքի հայթայթմանը, Պարսկաստանի տարածքում գործող զինագործարաններին և այլն (Ռուբէն 1982ա, 66, 82–85, 219–225 116–117; 1982բ, 24–25, 55, 59; 1982զ, 283, 1982է, 336 և այլն):

[13] Հավանաբար խոսքը ռուսական արտադրության որևէ հրացանի մասին է:

Եզրակացություններ

Հայտնի քաղաքական, պետական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» խորագրով հուշագրության ութ հատորներում բացառիկ հետաքրքրական տեղեկություններ կան հայերի կողմից սառը զենքի կիրառության, դրա նշանակության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ սառը զենքի հետ առնչվող նման տեղեկությունները աչքի չեն ընկնում իրենց առատությամբ՝ Ռուբենի հաղորդած տեղեկությունները հանդիսանում են խիստ արժեքավոր: Ռուբենի վկայությունները ցույց են տալիս, որ թեև հրազենի լայնորեն տարածմանը, սառը զենքը շարունակում էր կիրառության մեջ մնալ Արևմտյան Հայաստանի լեռնային շրջանների բնակիչների և ազգային-ազատագրական շարժման գործիչների, ֆիդայիների շրջանում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Սառը զենքի տարբեր տեսակները, հատկապես դրա շեղբավոր տեսակները, նշված ժամանակաշրջանում ունեին ոչ միայն խորհրդանշական նշանակության, այլև դրանք չէին կորցրել իրենց մարտական նշանակությունը: Ռուբենի հուշերում տեղ գտած դաշույնների և թրերի գործածումով կռվիվների տեսարանների բազմաթիվ նկարագրությունները վկայում են դրա մասին: Արժեքավոր են հատկապես սառը զենքի մասին Ռուբենի հայտնած այն տեղեկությունները, որոնց հեղինակն անձամբ է ականատես եղել: Պետք է նշել, որ Ռուբենի հուշերում տեղ են գտնել նաև հետաքրքրական անդրադարձներ քննարկվող ժամանակաշրջանում հայերի կողմից հրազենի տարբեր տեսակների կիրառության մասին: Ցավոք, Ռուբենը չի հաղորդում տեղեկություններ սառը զենքերի պատրաստման վայրերի, եղանակների, զինագործ վարպետների մասին:

Այսպիսով, Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» խորագրով հուշագրությունը 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայության հասարակական-քաղաքական, կրթական, մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքի, կենցաղի, սովորույթների և բազմաթիվ այլ հարցերի հետ միասին բացառիկ տեղեկություններ է պարունակում հայերի կողմից սառը զենքի օգտագործման և վերջիններիս համար դրա ունեցած նշանակության վերաբերյալ: Ուստի հաշվի առնելով սառը զենքի վերաբերյալ աղբյուրների սակավությունը՝ Ռուբենի հուշերը հանդիսանում են կարևոր աղբյուր հայկական զինագործության և ռազմարվեստի պատմության դրվագների ուսումնասիրման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1956 – Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ., Երևան, 1956:

ԱՂԱՆՅԱՆ 2000 – Աղայան Գ., Հայկական զինագործությունը XIX դարում – XX դարի սկզբին (ըստ Կարնո և Ախալցխայի նյութերի), Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2000, № 3, 129–136:

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1958 – Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, Երևան, 1958:

ԲԱԶԷԵԱՆ 2020 – Բազէեան Կ., Արհեստներն ու տնայնագործութիւնը Վան-Վասպուրականում, Հանդէս ամսօրեայ, Հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա, 2020, 1–12, 395–396:

ԽՆԿԻԿՅԱՆ 1977 – Խնկիկյան Օ., Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Հայաստանի հնագիտական հուշարձանները 9, Երևան, 1977:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 1962 – Կարապետյան Ե., Սասուն. Ազգագրական նյութեր, Երևան, 1962:

ՀԱՐԹՄԱՆՆ 2011 – Հարթմանն Է., Ռուբէնի «Հայ յեղափոխականի մը յիշատակները»՝ ինքնավկայագրութեան առարկայ և պատմագրական աղբիւր, Ռուբեն Տեր-Մինասյան. փաստաթղթերի և նութերի ժողովածու, Երևան, 2011:

ՀՈՒԼՈՒՆԵԱՆ, ՀԱՃԵԱՆ 1964 – Հուլունեան Յ., Հաճեան Մ., Յուշամատեան Խոտորջուրի, Վիեննա, 1964:

ՄԱՌԱՆԿՈՋԵԱՆ 1891 – Մառանկոզեան Խ., Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «Մշակ», 13 հունիսի, 1891, Թիֆլիս, թիվ 65:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ 1960 – Մելիքսեթյան Վ., Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960:

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ 1912 – Յարութիւնեանց Մ., Բացատրական բառգիրք – Օտարազգի բառերի և օտարագիր բառերի ու դարձուածքների, Ալէքսանդրապոլ, 1912:

ՇԻՈՏ 1905 – Շուոտ Մ.Տ., Քրդերը Տաճկաց-Հայաստանում (Ազգագրական նիւթեր), հատոր Ա, Ս. Պետերբուրգ, 1905:

ՊԵՏՈՅԱՆ 2016 – Պետոյան Վ., Սասուն, Երևան, 2016:

ՌՈՒԲԷՆ 1982ա – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Ա, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982բ – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Բ, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982գ – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Գ, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982դ – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Դ, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982ե – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Ե, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982զ – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Զ, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982է – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է, Թեհրան, 1982:

ՌՈՒԲԷՆ 1982ը – Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Ը, Թեհրան, 1982:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2008 – Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան: Կյանքը և գործը, Երևան, 2008:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2012 – Ստեփանյան Խ., Ռուբենի հուշագրության պատմագիտական արժեքի շուրջ, Գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան, 2012, 2 (26):

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ 1999 – Փիլիպոսյան Ա., Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Հայաստանի հնագիտական հուշարձաններ 17, Երևան, 1999:

АСТВАЦАТУРЯН 1995 – Аствацатурян Э., Оружие народов Кавказа, Москва-Нальчик, 1995.

ДИМИДЮК 2019 – Димидюк Д., Холодное оружие в Армянских хрониках эпохи багратидов (конец IX середина XI вв.): Терминология Вопроса, Պատմություն եվ մշակույթ, Հայագիտական հանդես, Երևան, 2019, № 2, 33–48:

ЕГИАЗАРОВ 1891 – Егиазаров С., Исследования по истории учреждений в Закавказьи: Городские цехи. Ч. 2, Казань, 1891, 206.

ЕСАЯН 1966 – Есаян С., Оружие и военное дело древней Армении (III–I тыс. до н. э.), Ереван, 1966.

МАЛОЗЕМОВА 2015 – Малоземова Е., Холодное оружие народов Ближнего Востока в коллекциях МАЭ, Образы и знаки в традициях Южной и Юго-Западной Азии: Сборник МАЭ, СПб, Музей антропологии и этнографии им. Петра Великого РАН (Кунсткамера), 2015, Том. LXI.

PARMELEE 1888 – Parmelee M.P., Home and work by the rivers of Eden, Philadelphia, American Sunday School Union, 1888.

Edgar Hovhannisyan

PHD, associate professor

Kh. Abovyan Armenian State Pedagogical University

hovhannisyanedgar@yahoo.com

INFORMATION ABOUT COLD WEAPONS AND THEIR USE IN RUBEN'S MEMOIRS

Keywords: Ruben Ter-Minasyan, cold weapons, memoirs, national liberation struggle

After the introduction and widespread use of firearms, the use of cold weapons gradually began to decline, but it never completely lost its significance.

Different types of cold weapons have also been used by Armenians since ancient times. Weaponry was developed in Armenia with its various branches. Although firearms were widely used, cold weapons continued to be used in the late 19th and early 20th centuries.

"Memoirs of an Armenian Revolutionary," authored by the well-known political and state figure Ruben Ter-Minasyan, is an important source for studying the socio-political, educational, cultural, socio-economic life, lifestyle, customs, and many other issues of the Armenian people of that period.

The eight volumes of Ruben's memoirs contain exceptionally interesting information about the use of cold weapons by Armenians, their significance, and a number of other issues. Considering that such information relating to cold weapons is not abundant, the information provided by Ruben is extremely valuable.

The article refers to the information available in Ruben's "Memoirs of an Armenian Revolutionary" about cold weapons, which are subjected to historical-comparative analysis.

Эдгар Оганнесян

кандидат исторических наук, доцент

Армянский Государственный Университет имени Х. Абовяна

hovhannisyanedgar@yahoo.com

СВЕДЕНИЯ О ХОЛОДНОМ ОРУЖИИ И ЕГО ПРИМЕНЕНИИ В ВОСПОМИНАНИЯХ РУБЕНА

Ключевые слова: Рубен Тер-Минасян, холодное оружие, воспоминания, национально-освободительная борьба

После создания и широкого распространения огнестрельного оружия, применение холодного оружия постепенно начало сокращаться, однако оно никогда окончательно не утратило своего значения.

Различные виды холодного оружия с древнейших времен использовались и армянами. В Армении было развито оружейное дело с его различными отраслями. Хотя огнестрельное оружие широко использовалось, холодное оружие продолжало оставаться в употреблении в конце XIX – начале XX веков.

Мемуары известного политического и государственного деятеля Рубена Тер-Минасяна под названием «Воспоминания армянского революционера» являются важным

источником для изучения общественно-политической, образовательной, культурной, социально-экономической жизни, быта, обычаев и многих других вопросов армянского народа того периода.

В восьми томах воспоминаний Рубена содержится исключительно интересная информация о применении армянами холодного оружия, его значении и ряде других вопросов. Учитывая, что подобная информация, касающаяся холодного оружия, не отличается своим обилием, сведения, сообщенные Рубеном, являются чрезвычайно ценными.

Статья обращается к имеющейся в мемуарах Рубена «Воспоминания армянского революционера» информации о холодном оружии, которая подвергается историко-сравнительному анализу.